

ԵՎԳԻՆԵ ՎԱՐՏԱՆՅԱՆ

Հաշվապահական հաշվառում ըստ ճյուղերի,
բակալավորիս, 3-րդ կուրս

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *ցպահանջ ավանդ, ժամկետային ավանդ, պարզ տոկոսի մեթոդ, բարդ տոկոսի մեթոդ, ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորում*

Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ բանկային ռեսուրսների մեծ մասը ձևավորվում է, երբ բանկը վարում է ավանդային գործառնություններ, որոնց արդյունավետությունից և ճիշտ կազմակերպումից է կախված ցանկացած վարկային կազմակերպության գործունեության կայունությունը: Թեմայի նպատակն է ներկայացնել ավանդների դասակարգումը, հաշվառումն ու վերլուծությունը:

Բանկային համակարգը, լինելով ՀՀ ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտը, ընդգրկում է 17 գործող առևտրային բանկեր: Բանկի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է բնակչությունից միջոցներ ներգրավելու կամ պարտավորություններ ստանձնելու կարողությամբ: Բանկի ներգրաված միջոցների տարատեսակների փոփոխությունները բանկի կառավարման կարևորագույն օղակն են: ՀՀ օրենսդրության համաձայն՝ ավանդներ ընդունելը կամ ավանդների ընդունման առաջարկով հանդես գալը համարվում է բանկի մենաշնորհը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 902-րդ հոդվածի համաձայն՝ բանկը պարտավոր է ավանդատուից ներգրաված դրամական գումարը վերջինիս վերադարձնել նրա առաջին իսկ պահանջի դեպքում՝ անկախ ավանդի տեսակից և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից: Գործնականում ավելի տարածված է ավանդների դասակարգումը ըստ ժամկետայնության (ցպահանջ և ժամկետային ավանդներ): Բանկի տեսանկյունից ցպահանջ ավանդները շահավետ են նրանով, որ էժան, երբեմն նաև անվճար ռեսուրս են բանկի համար: Բացի դրանից, այս ավանդների շնորհիվ ձևավորվում է որոշակի նստվածք, ինչը հնարավորություն է տալիս մասամբ լուծել իրացվելիության խնդիրը: Ժամկետային ավանդների առավելությունն այն է, որ դրանք ունեն երկարաժամկետ բնույթ և հետևաբար երկարաժամկետ ներդրումների աղբյուր են և բարձրացնում են վարկային ռեսուրսների առավել կայուն մասը:

Ավանդների ներգրավման, պահպանման և մարման համար ներքին վերահսկողությունը մեծապես կարևորվում է: Վերահսկողական միջոցառումները բանկի ղեկավարության կողմից ներդրված քաղաքականությունն են, որոնք ապահովում են բանկի խնդիրների լուծման իրագործումը:

Բանկային ռեսուրսների ընդհանուր ծավալում ներգրավված ռեսուրսները գերակշռող են: Դրանց մասնաբաժինը տարբեր բանկերում կազմում է 75% և ավելի: Շուկայական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ, ներգրավված ռեսուրսների կառուցվածքը զգալի փոփոխություններ է կրել, ինչը պայմանավորված է հին բանկային համակարգի համար նոր, ոչ ավան-

դական ձևերով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավորապես ազատ դրամական միջոցների կուտակմամբ:

Բանկային ավանդ է համարվում անձին տրամադրված այն դրամական գումարը, որի տրամադրման պայմանները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բանկային ավանդի պայմանագրի համար սահմանված պահանջներին, և որը չի տրամադրվել այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ կամ որպես գույք, գույքային իրավունքներ վարձակալելու կամ ձեռք բերելու, աշխատանքի կամ ծառայության հատուցում կամ որպես պարտավորության ապահովման միջոց:¹ Ժամանակակից բանկային փորձը բնութագրվում է ավանդների և ավանդային հաշիվների մեծ քանակությամբ: Սա պայմանավորված է նրանով, որ բանկերը ձգտում են բարձր մրցակցային պայմաններում առավել լրիվ բավարարել հաճախորդների տարբեր խմբերի՝ բանկային ծառայություններից օգտվելու պահանջարկը և նրանց խնայողությունները և ազատ դրամական կապիտալը ներգրավել բանկային հաշիվներում: Գոյություն ունեն ավանդների դասակարգման մի շարք չափանիշներ: Ըստ տնտեսական բովանդակության՝ ավանդները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ցպահանջ ավանդներ՝ ներառյալ հաշվեկշռային և ընթացիկ հաշիվների մնացորդներ, ժամկետային ավանդներ, խնայողական ավանդներ, արժեթղթեր, ըստ ավանդատուների տիպերի՝ ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց ավանդներ, ըստ ժամկետայնության՝ ցպահանջ, ժամկետային ավանդներ և այլն:

Ցպահանջ ավանդները ներկայացվում են տարբեր հաշիվներով, որոնցից սեփականատերերը առաջին իսկ պահանջի դեպքում կարող են դրամական միջոցներ ստանալ: Ցպահանջ ավանդային հաշիվների առավելությունը սեփականատերերի համար բարձր իրացվելիությունն է: Այդպիսի հաշիվում առկա գումարները հաշվառվում և հանվում են գործարար նպատակներով և այլ գործարքների կատարման համար, որոնք դրամական արտահայտությամբ արտացոլվում են այդ հաշիվներում: Հիմնական թերությունը վճարվող տոկոսների բացակայությունը կամ շատ ցածր լինելն է: Ցպահանջ ավանդային հաշիվների առանձնահատկությունները բնութագրվում են հետևյալ կերպ՝

դրամական միջոցների ներդրումը և հետ ստացումը ցանկացած պահի կատարվում են առանց սահմանափակումների:

հաշիվը տնօրինողը բանկին հաշվեհամարի օգտագործման համար կոմիսիոն վճար է կատարում՝ հաստատուն ամսական դրույքաչափով կամ հաշվի վրա դեբետային շրջանառության նկատմամբ տոկոսի տեսքով,

բանկը ցածր տոկոսադրույք է վճարում ցպահանջ հաշիվներում դրամական միջոցների ներդրման համար կամ ընդհանրապես չի վճարում:

¹ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք:

Համաշխարհային բանկային փորձում ցպահանջ ավանդային հաշիվների հետ միասին լայնորեն տարածում են գտել ավանդային հաշիվների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են NOW հաշիվները և հավաստագրված չեկերը (certified checks,¹ ԱՄՆ): NOW հաշիվները ցպահանջ ավանդային հաշիվներ են, որոնց միջոցով հաճախորդի կողմից կարող են դուրս գրվել հաշվարկային փաստաթղթեր՝ երրորդ անձանց օգտին: Այս հաշիվները համատեղում են իրացվելիության սկզբունքը շահույթի ձևով եկամուտ ստանալու հնարավորությամբ: Դրանք բացվում են միայն ֆիզիկական անձանց և շահույթ չհետապնդող ընկերությունների համար: Հավաստագրված չեկերում բանկը հատուկ նշում է կատարում դրանց վճարման համար միջոցների առկայության վերաբերյալ: Տեղական փորձում այդ կարգի հաշիվները կոչվում էին «հաշվարկային չեկեր» բանկի կողմից ակցեպտավորված»:

Ցպահանջ ավանդների հաշիվներով գործարքների հաճախականության շնորհիվ դրանց գործառնական ծախսերը առհասարակ ավելի բարձր են, քան ժամկետային ավանդների գծով, սակայն քանի որ բանկերը սովորաբար ցածր տոկոսադրույքներ են վճարում կամ տոկոսները չեն վճարում, այդ ռեսուրսները համեմատաբար էժան են բանկի համար: Միևնույն ժամանակ, այս ավանդները համարվում են ռեսուրսների առավել անկայուն մասը, դրա համար բանկերը պետք է ավելի բարձր պահուստ սահմանեն, որպեսզի ապահովեն իրացվելիությունը: Հետևաբար, այդ միջոցների օպտիմալ տեսակարար կշիռ է համարվում բանկային ռեսուրսների մինչև 30-36%-ը:

Ժամկետային բանկային ավանդները պայմանագրով սահմանված հետ վերադարձման ժամկետով բանկին տրամադրված դրամական միջոցներն են: Դրանց սեփականատերերին սովորաբար վճարվում է ավելի մեծ տոկոս, քան ցպահանջ ավանդների համար, և, որպես կանոն, կան սահմանափակումներ ավանդը վաղաժամկետ հետ ստանալու, իսկ որոշ դեպքերում՝ նաև համալրելու համար: Բանկը այս դեպքում իրավունք ունի տոկոսները չվճարել ավանդատուին կամ մասամբ վճարել: Ժամկետային ավանդների գծով բանկերի կատարած գործառնական ծախսերը, ինչպես նաև պահուստավորման դրույքները սովորաբար ավելի ցածր են, քան ցպահանջ ավանդների դեպքում, սակայն վճարվող տոկոսադրույքները շատ ավելի բարձր են, ուստի բանկերի համար միշտ չէ, որ շահութաբեր են նման ավանդները: Սակայն բանկերը շահագրգռված են ժամկետային ավանդների ներգրավմամբ, քանի որ դրանք կարող են օգտագործվել երկարաժամկետ ներդրումների համար: Ժամկետային բանկային ավանդները բաժանվում են պայմանական ավանդների (ավանդը պահվում է մինչև որևէ դեպքի ի հայտ գալը), նախնական ծանուցման միջոցով հետ կանչելու (երբ հաճախորդը նախապես պայմանավորված ժամկետում պետք է դիմում ներկայացնի ավանդը հետ ստանալու համար) և սովորական ժամկետային ավանդների: Ժամկետային ավանդներ կարելի է կնքել ինչպես կարճաժամկետ՝ մինչև մեկ տարի ժամկետով, այնպես էլ՝ երկարաժամկետ: Հաճախ բանկերն առաջարկում են հատուկ նպատակներին հարմարեցված պայմաններով ավանդներ՝ ընտանեկան, մանուկների համար, ուսման ավանդներ և այլն, որոնց տոկոսադրույքները, ժամկետները և այլ պայմանները հարմարեցված են ավանդատուների հատուկ

¹ <http://economy-ru.info/info/73529/>

նպատակներին: Պահպանման ժամկետից ելնելով՝ առանձնացվում է ժամկետային ավանդների հետևյալ ժամանակահատվածները՝

1. մինչև 30 օր
2. 31-ից մինչև 90 օր
3. 91-ից մինչև 180 օր
4. 181 օրից մինչև 1 տարի
5. 1 տարուց մինչև 3 տարի
6. ավելի քան 3 տարի:

Խնայողական և ժամկետային ավանդները ավանդային ռեսուրսների առավել կայուն մասն են: Դրանք ավանդներ են, որոնք չունեն մարման որոշակի ժամկետ: Դրանք բնութագրական առանձնահատկություններն են՝


- դրամական միջոցների պահպանման համար սահմանված ժամկետի բացակայությունը,
- ավանդատուն կարող է ցանկացած պահի հետ ստանալ կամ համալրել ավանդը,
- հաշվից գումար կանխիկացնելիս կամ ներգրավելիս հաճախորդը ներկայացնում է խնայողական գրքույկը, որտեղ արտացոլվում է դրամի շարժը:

Խնայողական ավանդային հաշիվները հիմնականում բացվում են ֆիզիկական անձանց համար: Դրանք բանկերի համար շահավետ են նրանով, որ հիմնականում երկարաժամկետ բնույթ են կրում և, հետևաբար, երկարաժամկետ ներդրումների աղբյուր են: Այս ավանդները բանկերի համար ունեն նաև թերություններ, որոնցից են ավանդների գծով աճող տոկոսադրույքի վճարման անհրաժեշտությունը, այդպիսով մարժայի¹ նվազեցումը և այդ ավանդների ազդեցությունը տարբեր գործոնների վրա (քաղաքական, տնտեսական, հոգեբանական), ինչը մեծացնում է այդ հաշիվներից միջոցների արագ արտահոսքի և բանկի իրացվելիության վտանգը: Ժամկետային և խնայողական ավանդների տարատեսակ են նաև ավանդային ու խնայողական վկայականները՝ հավաստագրերը (սերտիֆիկատ): Համաշխարհային բանկային փորձում հայտնի է ավանդային հավաստագրերի երկու տեսակ՝ փոխանցելի և ոչ փոխանցելի: Փոխանցելի (շրջանառող) ավանդային հավաստագրերը կարող են փոխանցվել մեկ այլ անձի՝ դրանք երկրորդային շուկայում ձեռք բերելու և վաճառելու ճանապարհով: Սրանք, որպես կանոն, ենթակա են մարման 14-270 օրվա ընթացքում²: Ոչ փոխանցելի ավանդային հավաստագրերը պահվում են ավանդատուի մոտ և ժամկետը լրանալուց հետո ներկայացվում են բանկին: ՀՀ-ում տարածված են հիմնականում այս տեսակի ժամկետային ավանդները: Առևտրային բանկի համար ռեսուրսների կուտակման այս ձևերի առավելությունն այն է, որ խոշոր գումարները բանկի տնօրինմանը տրամադրվում են խստորեն ամրագրված ժամանակաշրջանի համար և դրանով իսկ բարձրացնում են վարկային ռեսուրսների առավել կայուն մասը: Վերլուծելով 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ռեզիդենտներից ստացված ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը՝ ստանում ենք հետևյալ պատկերը.³

¹ Ակտիվային և պասիվային վարկային գործարքների գծով տոկոսների տարբերությունը:

² Տե՛ս Բ. Ասատրյան խմբ., Բանկային գործ, Երևան 2004:

³ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>



Գծապատկեր 1

Ռեզիդենտների ավանդների կառուցվածքում ցպահանջ ավանդները կազմել են 37% կամ 957.9 մլրդ դրամ, իսկ ժամկետային ավանդները՝ 63% կամ 1.659 տրլն դրամ: Տնային տնտեսությունների ավանդները ՀՀ առևտրային բանկերում 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են ավելի քան 1,350 տրլն դրամ: Տնային տնտեսություններին է պատկանում ավանդների ընդհանուր արժեքի ամենամեծ բաժինը՝ 52%-ը, որոնց հաջորդում են ձեռնարկություններն ու մասնավոր ընկերությունները: Վերջիններիս պատկանում է ընդհանուր ավանդների համապատասխանաբար 20%-ը և 17%-ը:

Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (նախանջ տարվա համար՝ 1/366):¹ Գոյություն ունի ավանդների համար վճարվող տոկոսների հաշվարկման երկու մեթոդ՝ պարզ և բարդ: Պարզ տոկոսը հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$I = (p) \cdot (r) \cdot (t),$$
 որտեղ՝
i – տոկոսագումար, p – ավանդի հիմնական գումար,
r – տոկոսադրույք, t – ժամանակահատված:

Աղյուսակ 1

Գործառնության բովանդակություն	ԴՏ	ԿՏ	Գումար
Գումարը կանխիկ մուտքագրվել է բանկային հաշվին	10000	30220	500.000
Ներդրված ավանդի գումարը տեղափոխվում է ավանդային հաշվի վրա	30220	33050	500.000
Հաջորդ օրվանից սկսած՝ բանկը օրական տոկոսադրույքը հաշվեգրում է պարզ տոկոսի բանաձևով՝ $(500.000 \cdot 0.05) \cdot 1/365 = 68,5$: Տոկոսագումարները յուրաքանչյուր օր հաշվեգրվում են որպես պարտավորություն	70225	33051	68,5

¹ Տե՛ս «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենք:

Դիցուք՝ ֆիզիկական անձը խնայողական ավանդի պայմանագրով բանկում 500.000 ՀՀԴ է ներդրել: Ավանդի տոկոսադրույքը կազմում է 5%:¹


Բարդ տոկոսը հաշվարկվում է ավանդի մայր գումարի և կուտակված տոկոսների նկատմամբ՝ հետևյալ բանաձևով՝ $Y * (1+i/n)^{n*m}$, որտեղ՝

Y-ը մայր գումարն է, N-ը տարվա ընթացքում կապիտալացումների քանակն է,

M-ը՝ տարիների քանակը, I-ը՝ տարեկան տոկոսադրույքը:

Այն հաշվարկվում է որոշակի ժամանակահատվածի համար՝ կիսամյակ, եռամյակ, ամիս կամ օր: Որքան կարճ է ժամանակահատվածը, այնքան հաճախակի է կատարվում տոկոսի հաշվարկը և այնքան մեծ է ստացվում ավանդի եկամտաբերությունը: ² Գծապատկերի միջոցով ներկայացնենք առևտրային բանկերի կողմից 181 օրից 1 տարի մարման ժամկետով ներգրավված ավանդների տոկոսադրույքները 2014-2018 թթ. հունվար ամսվա կտրվածքով (բացառությամբ ցպահանջ ավանդների):³

Ինչպես տեսնում ենք, նշված տոկոսադրույքը, դրամով արտահայտված ավանդների համար, տատանվում է 8-15%-ի, իսկ դոլարով ավանդների համար՝ 3-7%-ի շրջանակներում՝ առավել բարձր մակարդակի հասնելով 2016 թ., որից հետո ցուցաբերում է նվազման միտում:



Գծապատկեր 2

ՀՀ բանկային համակարգի հուսալիությանը, դրա նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը նպաստելու և ավանդատուների շահերի պաշտպանությունն ապահովելու համար ֆիզիկական անձանց բանկային ավանդները երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Նախատեսված են ֆիզիկական անձանց բանկային ավանդների երաշխավորման հետևյալ չափերը:⁴ Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի՝

¹ <https://www.cba.am/AM/laregulations/kan-802.pdf>


² Տե՛ս «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենք:

³ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

⁴ Տե՛ս «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք:

միայն դրամային բանկային ավանդ, ապա ավանդը երաշխավորվում է 10 մլն ՀՀԴ չափով
միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 5 մլն ՀՀԴ է
դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը 5 մլն դրամից ավելի է, ապա՝ միայն դրամային ավանդը՝ մինչև 10 մլն ՀՀԴ չափով
դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը պակաս է 5 մլն դրամից, ապա՝ դրամային ավանդը՝ ամբողջությամբ, արտարժույթային ավանդը՝ 5 մլն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Առևտրային բանկերի ավանդները, ըստ տնտեսության հատվածների, 2013-2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը (մլն ՀՀ դրամ):¹



Գծապատկեր 3

Բանկային ավանդների կառուցվածքում ռեզիդենտների մասնաբաժինը տատանվում է 71-80%-ի միջակայքում, իսկ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը՝ 20-29%-ի, ընդ որում, 2016 թ. համեմատությամբ, 2017 թ. ոչ ռեզիդենտների ավանդները կրճատվել են, իսկ ռեզիդենտների կողմից ներգրավված ավանդները աճման միտում են դրսևորել: Նշենք նաև, որ ներգրավված ավանդները հիմնականում արտարժույթով են:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ավանդային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի բանկի կողմից առաջարկվող ռեսուրսներ ներգրավելու գործիքները գրավիչ դարձնելը դրանց այն համարժեքների համեմատությամբ, որոնք թողարկվում են մրցակիցների կողմից, օրինակ՝ արժեթղթերը՝ տոկոսադրույքի նվազման հաշվին, ինչպես նաև ինֆլյացիայի ազդեցությունից պահպանումը: Բանկային ծառայությունների ոլորտում հաճախորդների սպասարկման և ներգրավման համար մրցակցության մակարդակի բարձրացման նպատակով բանկերը կարող են ներդնել ավանդների առցանց ներգրավման ծրագրեր: Բանկային գործունեության կարգավորումը պետք է նպաստի միջազգային փորձում ընդունված չափանիշների կիրառման միջոցով ՀՀ բանկային համակարգի ինտեգրմանը համաշխարհային ֆինանսական կառույցներին:

¹ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

ЕВГИНЕ ВАРТАНЯН

УЧЁТ И АНАЛИЗ ДЕПОЗИТОВ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ АРМЕНИИ

Ключевые слова: депозит до востребования, срочный депозит, метод простых процентных ставок, метод сложных процентов, гарантия вкладов физических лиц.

Банковская система, являющейся самой крупной отраслью финансового рынка РА, включает в себя 17 действующих коммерческих банков. Эффективность деятельности Банка обусловлена - возможностью привлечения средств от населения или выполнения обязательств. Изменчивость разновидностей привлеченных средств банком, является главным звеном в деятельности Банка. Принятие или предложение о принятии депозитов в соответствии с законодательством РА считается монополией банка.

Согласно статье 902 Гражданского кодекса Республики Армения, банк обязан выплатить деньги, внесённые вкладчиком по его же первому требованию, независимо от вида вклада, и выплатить проценты на условиях и в соответствии порядка, предусмотренным договором. В практике наиболее распространена классификация депозитов по срокам (депозиты до востребования и срочные депозиты). С точки зрения банка депозиты до востребования, выгодны тем, что они являются дешевыми, а иногда даже бесплатными ресурсами для банка. Кроме этого эти депозиты дают возможность, частично решить проблему ликвидности. Преимущество срочных депозитов заключается в том, что они имеют долгосрочный характер и, следовательно, являются долгосрочными источниками для инвестиций, и повышают более стабильную часть кредитных ресурсов.

Для привлечения, сохранения и погашения депозитов, важную роль играет внутренний надзор. Надзорные мероприятия представленные со стороны руководства банка, обеспечивают реализацию решения проблем.

EVGINE VARTANYAN

ACCOUNTING AND ANALYSIS OF DEPOSITS IN COMMERCIAL BANKS OF ARMENIA

Key words: demand deposit, time deposit, simple interest rate method, compound interest method, guarantee of deposits of individuals.

The banking system, which is the largest branch of the financial market of the Republic of Armenia, includes 17 operating commercial banks. The effectiveness of the Bank's activities is conditioned by the possibility of raising funds from the population or fulfilling obligations. The variability of the types of funds raised by the bank is the main link in the Bank's activities. Acceptance or proposal to accept deposits is considered a monopoly of the bank in accordance with RA legislation.

According to Article 902 of the Civil Code of the Republic of Armenia, the bank is obliged to pay the money deposited by the depositor at its first demand, regardless of the type of deposit, and pay interest on the terms and in the manner prescribed by the contract. In practice, the most common type of classification of deposits is classifying them by maturity (call deposits and term deposits). From the point of view of the bank's call deposits, are advantageous in that they are cheap and sometimes even free resources for the bank. In addition, these deposits provide an opportunity to solve partially the problem of liquidity. The advantage of term deposits is that they have a long-term nature and,